ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

դեկտեմբերի 2020 թվականի №Ա
ք. Երևան

«ՀԱՅՌՈՒՍԿՈԳԵՆԵՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Սույն թվականի հոկտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է դիմել Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Հովհաննիսյան թաղամասի №25/2 շենքի №13 բնակարանի բնակիչ Արևիկ Գրիգորյանը, ով «ՀայՌուսկոգեներացիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բաժանորդ է (տաք ջրի և կենտրոնացված ջեռուցման մատակարարման մասով) և մատակարար-սպառող իրավահարաբերությունների շրջանակում Ընկերության հետ պայմանագրային կողմ: Դիմումատուն հայտնել է, որ Ընկերության կողմից շուրջ երկու ամիս դադարեցված է Ավան վարչական շրջանի 6-րդ թաղամասի բաժանորդներին տաք ջրի մատակարարումը,

բ) Հանձնաժողովը 2020 թվականի հոկտեմբերի 15-ի №ՄՄ/34.4-Մ2-12/4354-2020 գրությամբ հարցի առնչությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել է Ընկերությանը, ինչին ի պատասխան Ընկերությունը, սույն թվականի հոկտեմբերի 20-ի №20/63 գրությամբ, նկարագրելով ՎԴ/2166/05/17 վարչական գործի (ըստ հայցի՝ Ընկերությունը ընդդեմ Հանձնաժողովի՝ էլեկտրաէներգիա գնելու համար Ընկերությանը ևս 24 ամիս երաշխիք տրամադրելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասով) ընթացքը և նշված գործով կայացված վճռի կատարման առնչությամբ իր դիտարկումները, հայտնել է որ բաժանորդ Արևիկ Գրիգորյանի ջեռուցումը և տաք ջրի մատակարարումը կարող է վերականգնել միայն վերը նշված դատական գործով առկա խնդրին դրական լուծում տրվելուց հետո,

գ) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը հիմք ընդունելով՝ Հանձնաժողովը 2020 թվականի նոյեմբերի 10-ից

Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի մայիսի 29-ի №23 որոշմամբ հաստատված՝ ջերմային էներգիայի մատակարարման և օգտագործման ժամանակավոր կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 56-րդ կետով սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) Վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի նոյեմբերի 16-ի № 20/69 գրությամբ նույնությամբ շարադրել է իր սույն թվականի հոկտեմբերի 20-ի №20/63 գրության բովանդակությունը՝ ավելացնելով, որ Հանձնաժողովի միջնորդությամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից վճարվել է 2020 թվականի հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին առաքված էլեկտրաէներգիայի չվիճարկվող մասի գումարը և Ընկերության կողմից մարվելով գազամատակարարման դիմաց պարտքը, վերականգնվել է գազամատակարարումը, որի արդյունքում վերականգնվել է նաև բաժանորդ Արևիկ Գրիգորյանի ջերմամատակարարումը: Նշվածից ելնելով էլ՝ Ընկերությունը խնդրել է կարճել սույն թվականի նոյեմբերի 10-ից իր նկատմամբ հարուցված վարչական վարույթը,

ե) Կանոնների 56-րդ կետի համաձայն՝ ջերմամատակարարող ընկերությունը, պայմանագրի կնքման պահից սկսած, պարտավոր է կազմակերպել սպառողի (բաժանորդի) ջերմամատակարարումը և ջերմային էներգիայի ծախսի և վճարումների հաշվառումը,

զ) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝ **Ընկերությունը խախտել է Կանոնների 56-րդ կետի պահանջը**՝ անհիմն կերպով դադարեցնելով բաժանորդների ջերմամատակարարումը: Ինչ վերաբերում է Ընկերության պարզաբանումներին, ապա դրանք չեն կարող դիտվել որպես թույլ տրված խախտման օբյեկտիվ պատճառներ և ազատել վերջինիս դրանց համար կիրառվող պատասխանատվությունից: Մասնավորապես, Ընկերության կողմից որևէ կերպ չի հիմնավորվել նշված պարտավորության կատարման առնչությունը մատնանշված դատական գործի և դրա արդյունքում կայացված դատական ակտի կատարման հետ: Ավելին, այդ առնչության բացակայության մասին վկայում է նաև այն, որ չնայած Ընկերությունն ի սկզբանե պնդել է, որ չի կարող վերականգնել բաժանորդի ջերմամատակարարումը մինչև նշված դատական գործով իր օգտին լուծում չտրվի, այնուհանդերձ նշված դատական գործով խնդիրները դեռևս վերջնականապես չհանգուցալուծված՝ կարողացել է վերականգնել բաժանորդի ջերմամատակարարումը: Միաժամանակ հարկ է նշել, որ Ընկերությունը որպես ձեռնարկատիրական գործնեություն իրականացնող, ինքն է կրում դրա առնչությամբ առկա ֆինանսական ռիսկերը, և դրանք որևէ

կերպ չեն կարող վերջինիս ազատել իր հետ համապատասխան պայմանագիր կնքած սպառողին ջերմամատակարարմամբ ապահովման պարտավորությունից, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝

Հանձնաժողովը որոշում է.

1. Կանոնների 56-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել։
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ս. ԱՂԻՆՅԱՆ

ք. Երևան
դեկտեմբերի 2020թ.